



ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ

Սարգիս Երկանեանի եւ Մարիամ Սողոյեան-Երկանեանի երրորդ զաւակ՝ Արամ Երկանեան ծնած է Կարին (Էրզրում), 20 Մայիս 1900ին. հոն ստացաւ իր նախակրթական ուսումը:

1915/23ի Հայկական Յեղասպանութեան վերապրելով, ապաստանեցաւ Կովկասի մէջ: 1917ին կամաւոր արձանագրուեցաւ, Թուրքիոյ կողմէ պապենական հողերը ազատագրելու համար: Չոր. Դրոյի բանակին մաս կազմելով, մասնակցեցաւ Բաշ Ապարանի պատերազմին:

Հայաստանի Հանրապետութեան անկախացումէն ետք, Արամ Երկանեան մաս կազմեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան յատուկ գործողութեանց խումբին, կոչուած «Նեմեսիս» Գործողութիւնը, որուն շնորհիւ 1921-1922 տարիներուն հայ արդարադատ բազուկներու հարուածներով իրարու ետեւ ինկան Հայկական Յեղասպանութիւնը ծրագրող եւ գործադրող թուրք պատասխանատուներ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, ան կը մեկնի Թիֆլիս, ուր 1920ի Յունիսին կը սպաննէ Ատրպէյճանի նախկին վարչապետ Խան Խոյիսքիի, որ 1918ին Պաքուի 30.000 հայերու սպանութիւնը գործադրած էր:

Ապա Արամ Երկանեան կ'անցնի Պոլիս, Վիենա եւ վերջապէս Պերլին, ուր 17 Ապրիլ 1922ին, Արշալիր Շիրակեանի ընկերակցութեամբ կը սպաննեն ծանօթ իթթիհատականներ Ճեմալ Ազիմը եւ Պեհաետտին Շաքիրը:

Արամ Երկանեան կ'անցնի Աւստրիա, ապա Ռումանիա եւ Պուքարէսթ. 1927ին կը փոխադրուի Արժանթինի մայրաքաղաք՝ Պուենոս Այրէս, ուր մաս կը կազմէ «Արմենիա» թերթի խմբագրութեան:

1931ին կ'ամուսնանայ Չապել Փարակեանի հետ, եւ կ'ունենան աղջիկ զաւակ մը: Թոքախտէ վարակուած, 1931ին կը փոխադրուի Գորտոպա, ուր կը մահանայ 2 Օգոստոս 1934ին: Իր մահէն 25 տարիներ ետք, Արամ Երկանեանի աճիւնները փոխադրուեցան Գորտոպայի Անդրանիկ Ակումբը, ուր ներկայիս մինչեւ իր դամբարանը կը կատարուին ուխտագնացութեան եւ յարգանքի յիշատակումներ: